ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐՈՒՄ

ՀՐԱՅՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո կոմունիստական շարժումը լայնորեն զարգանում էր նաև Ռուսաստանի ազգային ծայրամասերում։ ՌԿ(բ)Կ Կենտկոմն այդ շրջաններում կուսակցական աշխատանքին մեծ նշանակություն էր տալիս։ Ազգային ինքնավար հանրապետություններում և մարզերում գործում էին ՌԿ(բ)Կ ազգային սեկցիաներ։ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ, 1918 թ. հոկտեմբերին ՌԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր ստեղծվեց ՌԿ(բ)Կ-ի մուսուլմանական կազմակերպությունների Կենտրոնական բյուրո, որը ղեկավարում էր այդ սեկցիաների գործունեությունը։ Այդ սեկցիաները մեծ գործ կատարեցին կուսակցության շուրջը տարբեր ազգությունների աշխատավորների համախմբման, կուսակցական կադրերի պատրաստման և դաստիարակման գործում։

Մուսուլմանական կազմակերպությունների Կենտրոնական բյուրոյի նախաձեռնությամբ և ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ 1918 թ. նոյեմբերին (4—5-ը և 8—12-ը) Մոսկվայում տեղի ունեցավ Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսական I համագումարը[1]։

Համագումարում միջազգային դրության մասին զեկուցումով հանդես եկավ Դ. Բունիաթզադեն։ Խոսելով իմպերիալիստական երկրների գաղութատիրական քաղաքականության և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության համաշխարհային-պատմական նշանակության մասին, զեկուցողը կանգ առավ ազգային շրջաններում սովետական իշխանության քաղաքականության, կուսակցական աշխատանքի ձևերի ու մեթոդների վրա։ Ընդունված բանաձևում համագումարն առաջարկում էր «Արևելքի ժողովուրդների կոմունիստների ներկայացուցիչներից ստեղծել միջազգային պրոպագանդայի բաժին»՝ կովկասյան, թուրքական, պարսկական և այլ ենթաբաժիններով[2]։ Համագումարն ընտրեց ՌԿ(բ)Կ մուսուլմանական կազմակերպությունների Կենտրոնական բյուրո[3], որը հետագայում վերանվանվեց Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների Կենտրոնական բյուրո. այն միավորեց ինչպես Թուրքեստանի, Բաշկիրիայի, Պովոլժիեյի, Կիրգիզիայի, Կովկասի, այնպես էլ Թուրքիայի, Պարսկաստանի, Ադրբեջանի, Բուխարայի և Վրաստանի կոմունիստական խմբերին, որոնք աշխատում էին Սովետական Ռուսաստանում։ Կենտրոնական բյուրոյին կից այլ սեկցիաների հետ միասին գործում էին նաև ադրբեջանական ու վրացական սեկցիաները։

Արևելքում կոմունիստական գաղափարների տարածման գործում կարևոր դեր խաղաց նաև Անդրկովկասի մուսուլմանների գործերի կոմիսարիատը (Աստրախանում), որի նախագահն էր Ն. Նարիմանովը։ Կոմիսարիատի խնդիրն էր մամուլի և ագիտացիայի միջոցով Անդրկովկասի մուսուլման աշխա-

---

1 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (այսուհետև ՄԼԻ ԿԿԱ), ֆ. 17, ց. 2, պ. մ. 1, թ. 5։

2 Նույն տեղում, թ. 5։

3 ՍՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ՀՀՊԿԱ), ֆ. 1318, ց. 1, պ. մ. 84, թ. 8։

տավորների շրջանում տարածել «կոմունիզմի գաղափարները և հիմք ստեղծել խաների, բեգերի, կապիտալիստների լծից այդ աշխատավոր մասսայի ազատագրման համար»[4]։ 1919 թ. հունվարի 16-ին ՌՍՖՍՀ-ի ազգությունների ժողկոմատը Մոսկվայում ստեղծեց կոմիսարիատին կից Անդրկովկասի մուսուլմանների գործերի բաժին։ Այն հսկայական աշխատանք կատարեց Սովետական Ռուսաստանի տարածքում ապրող մուսուլման աշխատավորների շրջանում կուլտուր-լուսավորական շինարարության ասպարեզում, պատրաստեց և աշխատողներ ուղարկեց Անդրկովկաս։ Բաժնի աշխատանքը հատկապես գործնական բնույթ ստացավ կարմիր բանակի կողմից Հյուսիսային Կովկասում սպիտակգվարդիականների ջախջախումից և սովետական իշխանության վերահաստատումից հետո։ Ազգությունների ժողկոմիսարիատի 1920 թ. հունվարի 5-ի որոշմամբ Ն. Նարիմանովն ուղարկվեց Կովկաս և ստանձնեց Անդրկովկասի մուսուլմանների գծով կոմիսարի պարտականությունը։ Հատկացվեց 200 հազար ռուբլի՝ աշխատանքները տեղում կազմակերպելու համար[5]։

Սովետական Ռուսաստանում գտնվող մուսուլման կոմունիստներն ակտիվորեն մասնակցում էին սովետական իշխանության թշնամիների դեմ մղվող պայքարին։ 1919 թ. ձևավորվեց մուսուլմանական հատուկ ջոկատը։ 11-րդ կարմիր բանակում ևս կային մի քանի մուսուլմանական մարտական ջոկատներ, որոնք հերոսաբար մարտնչեցին Հյուսիսային Կովկասում, Ցարիցինի (Վոլգոգրադ) մոտ, Աստրախանում։

Հյուսիսային Կովկասի ազատագրումը սպիտանգվարդիականներից նպաստավոր պայմաններ ստեղծեց Անդրկովկասում կոմունիստական աշխատանքի ծավալման համար։ Շուտով Ռուսաստանում ապրող ու աշխատող անդրկովկասցի շատ կոմունիստներ վերադարձան Անդրկովկաս և նոր ուժով լծվեցին տեղի կոմունիստական կազմակերպությունների գործունեության ակտիվացմանը։ Իր աշխատանքներն ակտիվացրեց նաև «Հումմեթը»։ Նրա օրգան «Հումմեթ» թերթը հսկայական դեր խաղաց մուսուլման աշխատավորության շրջանում կոմունիստական գաղափարների տարածման գործում։

Կոմինտերնի ստեղծումով սկսվեց բոլշևիկյան կուսակցության և Սովետական Ռուսաստանի շուրջը նոր ձևավորվող կոմկուսակցությունների համախմբումը։ Կոմինտերնի I կոնգրեսի մանիֆեստը վճռականորեն մերկացնում էր իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը և առաջին պլան էր մղում հեղափոխական պայքարի միջոցով Արևելքի ճնշված ժողովուրդների ազատագրման խնդիրը։ Այդ փաստաթղթում միտք էր հայտնվում Արևելքի երկրների ոչ կապիտալիստական զարգացման հնարավորության մասին՝ Եվրոպայի սոցիալիստական երկրների կողմից գաղափարական և նյութական աջակցության պայմանների դեպքում։ Դրա հետ միաժամանակ գաղութների և կիսագաղութների ազատագրումը դիտվում էր գաղութատեր պետություններում կատարվելիք պրոլետարական հեղափոխությունների հետ սերտ կապի մեջ։

Առաջին կոնգրեսի որոշումներում պարզորոշ արտահայտված էր Կոմինտերնի ձգտումը՝ աջակցելու ազգային-ազատագրական շարժումներին, ստեղծելու ճնշված ժողովուրդների հակաիմպերիալիստական ճակատ՝ գաղութատիրության վերացման համար։ Կոնգրեսում առաջ քաշվեց «Կեցցե Արևելքի ճնշված ժողովուրդների հեղափոխական դաշինքը Ռուսաստանի և Եվրոպայի սոցիալիստական բանվորների հետ»[6] լոզունգը։ Այս շրջանում Արևելքի առաջին սերընդի շատ կոմունիստների հատուկ էին «ձախությունն» բնույթի սխալներ, որոնք արտահայտվում էին գլխավորապես այն բանում, որ առաջ էր քաշվում Արևելքի երկրներում սոցիալիստական հեղափոխության անհրաժեշտությունը և ժխտվում էր ազգային բուրժուազիայի դերը հակաիմպերիալիստական պայքարում։ Սակայն այդ հիվանդությունն ուներ նաև մեկ այլ դրսևորում. որոշ կոմունիստներ

---

4 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 17, ց. 42, պ. մ. 32, թ. 60։

5 ՍՍՀՄ ՀՀՊԿԱ, ֆ. 1318, ց. 1, գ. 4(21), թ. 13։

6 «Коммунистический Интернационал», 1919, № 4, с. 563.

գերագնահատում էին ռազմական գործոնի նշանակությունը՝ գաղութների ազգային և սոցիալական ազատագրման գործում։ «Ձախերն» առաջարկում էին շրջանցել ազգային-ազատագրական պայքարի դեմոկրատական փուլը կամ, ավելի ճիշտ, ազգային-ազատագրական հեղափոխությունը վերածել սոցիալիստականի և, այսպիսով, անմիջապես լուծել ազգային ու սոցիալական ազատագրության խնդիրները։ Իհարկե, «ձախերը» չէին ժխտում, որ Արևելքի երկրներում պրոլետարիատը ծայրահեղորեն թույլ է և թվով քիչ։ Նրանք չէին ժխտում նաև, որ աշխատավորության մեծամասնությունը կազմում է գյուղացիությունը, որը հետամնաց էր՝ վարակված կրոնական ֆանատիզմով և գտնվում էր ռեակցիոն դասակարգերի ազդեցության տակ։ Բայց, ձգտելով ավելի արագորեն հաղթահարել այդ արգելիչ գործոնները, «ձախերը» գտնում էին, որ միայն Սովետական Ռուսաստանի հեղափոխական բանակի ռազմական արշավանքը կարող է իրականացնել ազգային . և սոցիալիստական հեղափոխությունների միաժամանակյա հաղթանակն Արևելքի սահմանակից երկրներում։

Ազատագրական ռազմական արշավանքի մասին նշված թեզն առաջին անգամ բարձրացվեց Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսական I համագումարում։

Հեղափոխական բանակի ռազմական արշավանքի անհրաժեշտության մասին դրույթը հատկապես եռանդուն առաջ էին քաշում և պաշտպանում «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթը և Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների Կենտրոնական բյուրոյի անդամների մի մասը։ Այդ ժամանակ Արևելքում Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական պատերազմի ճակատներում կարմիր բանակի հաղթանակների ազդեցության տակ ընդլայնվում էր ազգային-ազատագրական շարժումը։ Որոշ երկրներում ծավալվեց պարտիզանական պայքար։ Այս ամենը որոշ ընկերների մոտ առաջ բերեց Արևելքի սահմանակից երկրներում հեղափոխությունն արագացնելու միտքը։ ՌԿ(բ)Կ Կենտկոմին հղած իր նամակներից մեկում Կենտրոնական բյուրոն նշում էր, որ «Արևելքում հեղափոխական շարժման զարգացումը և խորացումը Կենտրոնական բյուրոյին ակամա դնում է ռազմական կազմակերպության դրության մեջ»[7]։ Իսկ «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթը տպագրեց մի շարք հոդվածներ, որոնցում «հիմնավորում էր» դեպի Արևելք հեղափոխական ռազմական արշավանք սկսելու անհրաժեշտությունը։ Խմբագրական հոդվածներից մեկում նշվում էր, որ «հարկավոր է Թուրքեստանին տալ ուժեղ բանակ և հեղափոխության գործը Ասիայում կտարածվի հսկայական քայլերով»[8]։ Սակայն կուսակցությունը չգնաց այդ ուղիով, գտնելով, որ հարկավոր է ոչ թե «հեղափոխության արագացում, այլ հեղափոխության նախապատրաստության արագացում»[9]։ Վ. Ի. Լենինը վճռականորեն մերժում էր դրսից հեղափոխություն մտցնելու ռազմական մեթոդները, պաշտպանում պրոպագանդայի և ագիտացիայի միջոցով հեղափոխական առաջավոր կուսակցություն ստեղծելու գաղափարը։

Ազգային-գաղութային հեղափոխություններում ռազմական գործոնի մասին հարցը նորից բարձրացավ Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսական II համագումարում։ Այն տեղի ունեցավ Մոսկվայում՝ 1919 թ. նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 3-ը։ Համագումարին մասնակցում էին 71 պատվիրակներ վճռական և 11 պատվիրակներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։ Նրա աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին նաև Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների (ոչ միայն մուսուլմանական) ներկայացուցիչներից շատերը։ Համագումարի բացման նախօրյակին ՌԿ(բ)Կ Կենտկոմի և համագումարի մի խումբ պատվիրակների մասնակցությամբ տեղի ունեցավ խորհրդակցություն, որը ղեկավարում էր Վ. Ի. Լենինը։ Նրա կատարած դիտողություններն ընկան համագումարի որոշումների

---

7 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 17, ց. 2, գ. 29, թ. 48։

8 «Жизнь национальностей», 15. VI. 1919.

9 Վ. Ի. Լենին, երկ, հ. 41, էջ 546։

և այն զեկուցման հիմքում, որով նա հանդես եկավ համագումարի բացման օրը։ Խոսելով սովետական հանրապետության միջազգային ու ներքին դրության մասին, Վ. Ի. Լենինը կանգ առավ քաղաքացիական պատերազմի առաջին շրջանում նրա ձեռք բերած հաղթանակի նշանակության վրա՝ նաև Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների զարգացման համար։ «Միջազգային հեղափոխությանը ձեր մասնակցությունը ձեզ կկանգնեցնի բարդ ու դժվարին խնդրի առաջ,— ասում էր Վ. Ի. Լենինը,— որի լուծումն ընդհանուր հաջողության հիմք կծառայի, որովհետև այստեղ առաջին անգամ բնակչության մեծամասնությունը շարժվում է ինքնուրույն կերպով և ակտիվ գործոն կդառնա միջազգային իմպերիալիզմի տապալման համար մղվող պայքարում»[10]։ Վ. Ի. Լենինի զեկուցման հիման վրա ընդունվեց բանաձև, որը հանձնվեց համագումարի նախագահությանը։

Համագումարում լուրջ վիճաբանություններ առաջացան ազգային-գաղութային հեղափոխություններում ռազմական գործոնի դերի հարցի շուրջ։ Գլխավոր զեկուցողը Մ. Սուլթան-Գալիևն էր։ Նա զարգացրեց այն միտքը, որ Կոլչակի և Դենիկինի դեմ կարմիր բանակի հաղթանակները և նույնիսկ Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ավարտը երկրին կտա միայն որոշ ընդմիջում։ Դրանից հետո կսկսվի միջազգային հեղափոխություն ու միջազգային քաղաքացիական պատերազմ, որին անխուսափելիորեն կմասնակցեն նաև Արևելքի ճնշված երկրների՝ Թուրքիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Աֆղանստանի և այլ երկրների ժողովուրդները։ «Մենք պետք է նախապատրաստվենք նման պայքարի,— ասում էր Մ. Սուլթան-Գալիևը։—Դրա համար մենք Արևելքի հեղափոխականացած ժողովուրդներից՝ թաթարներից, բաշկիրներից, թուրքեստանցիներից, կիրգիզներից պետք է... ստեղծենք արևելյան կարմիր բանակ... որը պետք է գործի Արևելքում... միջազգային իմպերիալիզմի կամ հենց Արևելքի դեմ, եթե Արևելքն օգտագործվի... իմպերիալիզմի կողմից»[11]։ Մ. Սուլթան-Գալիևը հաղորդեց, որ մուսուլմանական կամ արևելյան կարմիր բանակ ստեղծելու գաղափարը պատկանում է Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրոյին[12]։ Մուսուլմանական բանակի ստեղծման և դեպի Արևելք նրա երթը նախապատրաստելու մասին Մ. Սուլթան-Գալիևի առաջարկը հանդիպեց ՌՍՖՍՀ-ի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ Ռ. Քաթանյանի դիմադրությանը։ Նոյեմբերի 24-ի նիստում նա ասաց. «Երբ ընկ. [Սուլթան-Գալիևը] ասում է, թե անհրաժեշտ է կենտրոնացնել մուսուլմանական զորամասերը որոշակի վայրերում, որպեսզի նրանք գտնվեն մուսուլմանների տրամադրության տակ, ինձ մոտ հարց է առաջանում. իսկ դուք մոռացե՞լ եք, որ երբ Պետրոգրադի վրա հարձակվում էր Յուդենիչը, բաշկիրական բրիգադան հսկայական ծառայություն մատուցեց հեղափոխությանը նրանով, որ կռվում էր Նևայի ափերին։ Հարձակվում է Դենիկինը։ Այժմ ամեն մի ավելորդ մարդ մեզ հարկավոր է...։ Իսկ մեզ ասում են՝ վերցրեք այդ զինվորներին։ Ինձ մոտ հարց է առաջանում՝ որտե՞ղ ենք մենք գտնվում, ջախջախվա՞ծ է արդյոք Դենիկինը։ Եվ մի՞թե մուսուլմանական զորամասերը կատարում են իրենց համար այլ գործ։ Մի՞թե քշելով Դենիկինին՝ նրանք չեն գնում ազատագրելու Դաղստանը, Ադրբեջանը, չեն նպաստում այն բանին, որպեսզի հեղափոխությունն անցնի Պարսկաստան, [իսկ հետո] նաև ավելի հեռու, որպեսզի այն ընդգրկի ողջ Ասիան...։ Մուսուլմանական զորամասերը պետք է մնան այնտեղ, որտեղ նրանց պահանջում է հեղափոխությունը»։ Ռ. Քաթանյանը բացատրում էր, թե ինչ պետք է հասկանալ Արևելքի հեղափոխականացում հասկացության ներքո։ Նա ցույց էր տալիս, որ Արևելքի հեղափոխականացումը պետք է իրականանա ոչ թե սվինների օգնությամբ, այլ գաղափարների տարածման միջոցով։ «Հարկավոր է,— ասում էր նա,— որ-

10 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 402։

11 ՄԼԻ ԿԿԿ, ֆ. 17, ց. 2, գ. 4. թ. 206—207։

12 Նույն տեղում, թ. 179։

պնսգի կոմունիստները, որոնք ուղևորվում են Արևելք, ժողովրդին կարողանան տալ որոշակի սոցիալական լոզունգներ»։ Նախ և առաջ պետք է առաջ քաշվի «ամբողջ հողը ժողովրդին» պահանջը, և երբ այն կիրականանա, «այնտեղ, հենց տեղում կստեղծվի մեծ քաջարի կարմիր բանակ, որը կմիանա մեր բանակի հետ, առաջ կընթանա և վերջիվերջո կհաղթի»[13]։ Ռ. Քաթանյանին պաշտպանեց Վ. Լուկաշովը։ Նա հայտարարեց, որ հանդես է գալիս այն պնդման դեմ, թե իբր անհրաժեշտ է «ռազմական ուժերը կենտրոնացնել Արևելքում»[14]։ Տպավորիչ ճառով հանդես եկավ Ս. Սաիդ-Գալիևը, պնդելով, որ «Մենք չենք կարող այժմ գնալ Արևելք՝ սվիններով բանակով։ Չի կարելի հեղափոխություն մտցնել դրսից։ Հեղափոխություն պետք է կատարել ներսից»[15]։

Բայց և այնպես համագումարը պաշտպանեց Մ. Սուլթան-Գալիևի ազգային-ձախ թեզը և նրա զեկուցման հիման վրա ընդունած բանաձևում (արևելյան հարցի մասին) խորհուրդ տվեց «ձեռնամուխ լինել արևելյան ինտերնացիոնալիստական դասակարգային կարմիր բանակի ստեղծմանը, որպես միջազգային կարմիր բանակի բաղկացուցիչ մաս»[16]։ Սովետական կառավարությունը, սակայն, վճռականորեն մերժեց մուսուլմանական բանակի ստեղծման գաղափարը։

Արևելքի կոմունիստական կազմակերպությունների համառուսական II համագումարում բանավեճ տեղի ունեցավ նաև Ասիայի երկրներում ազգային-ազատագրական ու բանվորական շարժման և այլ հարցերի շուրջը։ Համագումարում մեծ վիճաբանություններ տեղի ունեցան համաշխարհային հեղափոխական պրոցեսում Արևելքի ազատագրական պայքարի տեղի և դերի հարցի շուրջ։ Գլխավոր զեկուցման (Մ. Սուլթան-Գալիև) մեջ զարգացվում էր այն միտքը, որ հենց Արևելքում են կենտրոնացված համաշխարհային սոցիալական հեղափոխության գլխավոր լծակները։ Այդ նույն տեսակետը պաշտպանում էին նաև ուրիշ պատվիրակներ։ «Արևելքը,— հայտարարում էր Մ. Սուլթան-Գալիևը,—հանդիսանում է հեղափոխական այն կաթսան, որը կարող է հեղափոխության մեջ ընկղմել ամբողջ Արևմտյան Եվրոպան»[17]։ Իր դատողություններում նա ելնում էր այն բանից, որ Արևելքն արևմտյան կապիտալիզմի գոյության գլխավոր տնտեսական աղբյուրն է և, զրկվելով դրանից, նա չի կարող այլևս դիմանալ արևմտյան հեղափոխական, հարձակվող պրոլետարիատի հարվածներին։ «Երբ Արևմուտքի բանվորները սկսում են առաջադրել այս կամ այն տնտեսական պահանջն իրենց բուրժուազիային,— ասում էր Մ. Սուլթան-Գալիևը,— ապա այդ բուրժուազիան համարյա միշտ բավարարում է [նրանց],... որովհետև այդ բուրժուազիան ունի ռեսուրսներ, ունի անհամար աղբյուրներ, որտեղից նա քամում է բոլոր անհրաժեշտ հյութերը»[18]։ Համաշխարհային հեղափոխական պրոցեսում Արևելքի վճռական դերի մասին նման միակողմանի, ազգային նեղ կոնցեպցիան լիովին աղավաղում էր իրականությունը, առաջ քաշում ոչ ճիշտ կողմնորոշում և դրա համար էլ քաղաքական առումով վտանգավոր էր։ Անդրադառնալով հարցի տնտեսական կողմին, Մ. Սուլթան-Գալիևի կոնցեպցիան ավելի գիտակից և հեղափոխական եվրոպական պրոլետարիատին դնում էր անգործության մեջ, նրան ստիպելով սպասել Արևելքի հեղափոխությանը։ Այդ «տեսության» վտանգավորությունն այն էր, որ Արևմուտքի պրոլետարական հեղափոխական շարժումը և Արևելքի ազգային-ազատագրական պայքարը չէր համախմբում Սովետական Ռուսաստանի շուրջը։

---

13 Նույն տեղում, պ. մ. 4, թ. 231—232։

14 Նույն տեղում, թ. 261։

15 Նույն տեղում, թ. 235—236։

16 Նույն տեղում, ց. 65, գ. 9, թ. 56։

17 Նույն տեղում, ց. 2, գ. 4, թ. 203։

18 Նույն տեղում, թ. 201։

Մ. Սուլթան-Գալիևի դեմ հանդես եկավ Վ. Լուկաշովը։ Նա նշեց, որ Արևելքն իր սոցիալ-տնտեսական զարգացմամբ չի կարող միանգամից ընդունել կոմունիստական գաղափարախոսությունը։ «Եթե Արևելք գնանք կոմունիզմով,— ասաց նա,— ապա Արևելքը մեզ դուրս կանի։ Արևելքում կոմունիզմի համար տեղ չկա այն ձևով, ինչ ներկայացված է մեզ»։ Դրա համար էլ Վ. Լուկաշովն առաջարկում էր դեպի Արևելք «գնալ նացիոնալիզմով», որը հասկանալի էր մասսաներին։ Նա գտնում էր, որ ազգային ինքնուրույն պետությունների առաջացումը Արևելքում պետք է անցման աստիճան հանդիսանա սոցիալական վերակառուցման մեջ։ Թեև, ասում էր նա, Արևելքում կան «բոլոր պայմանները՝ տնտեսական, ագրարային, որոնք հնարավոր են դարձնում այդ (սոցիալիստական—Հ. Դ.) կարգի ստեղծումը, բայց նրանք դեռևս ոչ գիտակից ժողովուրդներ են, և միայն դրա համար անմիջապես հնարավոր չէ սոցիալիստական հեղափոխությունը»։ Մենք պետք է, կոչ էր անում նա, օգնենք ժողովրդին նախ և առաջ հասկանալու, որ այդպիսի պայմաններ իրականում գոյություն ունեն։ Այն ժամանակ, ազգային պետությունների ստեղծումից հետո, «նրանք (ազգային պետությունները—Հ. Դ.) այժմ իսկ կսկսեն ներքնապես վերակառուցվել սոցիալական հիմքի վրա»[19]։ Թեև Վ. Լուկաշովի միտքն այնքան էլ պարզ չէ, բայց երևում է, որ նա ճիշտ էր հասկացել համագումարում Վ. Ի. Լենինի առաջ քաշած այն դրույթը, որ Արևելքի երկրներում հերթի է դրված ազգային հեղափոխությունը, որի զարգացումը պայմաններ կստեղծեր սոցիալիստական հեղափոխության համար։ Վ. Ի. Լենինը հաշվի առնելով, որ Արևելքի բնակչության մեծամասնությունը կազմում է գյուղացիությունը, ընդգծում էր այնտեղ միջնադարյան մնացուկների դեմ պայքարի առաջնահերթ լինելը[20], ազգային բուրժուադեմոկրատական հեղափոխության իրագործումը՝ ուղղված միջազգային իմպերիալիզմի և տեղական ֆեոդալների դեմ[21]։

Հետաքրքիր է նաև Ն. Նարիմանովի դիրքը, որը հանդես եկավ նրանց դեմ, ովքեր պնդում էին, թե Արևելքում սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ պայմաններ չկան։ «Ես ասում եմ, որ կան,— հայտարարեց նա։ Դա գյուղացիությունն է, որի դրությունը նրան ի վիճակի է դարձնում կատարելու սոցիալիստական հեղափոխություն և, այսպիսով, փոխհատուցել իրականում բանվորական համախմբված մասսաների բացակայությունն Արևելքում»[22]։

Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսական II համագումարը ցույց տվեց, որ կոմունիստները (սովետական և արևելյան) համառորեն փնտրում էին այն հարցերի պատասխանները, որոնք առաջ էին գալիս Արևելքի երկրներում ազգային-ազատագրական շարժման վերելքով։ Բայց ունենալով ցածր տեսական պատրաստվածություն, նրանք Արևելքի մասին դատողություններ էին անում՝ մանրամասն գիտելիքներ չունենալով այս կամ այն կոնկրետ երկրում դասակարգային ուժերի տեղաբաշխման և նրանց սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ։ Ինչպես նկատեց Ս. Սաիդ-Գալիևը, «ոչ միայն տեսական տվյալներ [չկան] արևելյան հարցի մասին, այլև նույնիսկ այդ հարցի մասին գրքույկներ շատ քիչ են լույս տե-

---

19 Նույն տեղում, ֆ. 17, ց. 2, գ. 4, թ. 210, 253, 258։

20 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 403։

21 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 404։

22 Մի՛ կկա, ֆ. 17, ց. 2, գ. 4, թ. 247։

սելը։ Մինչև Ասիայում այս կամ այն քաղաքականության իրականացումը, ասում էր նա, «հարկավոր է ուսումնասիրել Արևելքը... չունենալով ֆունդամենտ, մենք չենք կարող նայել դեպի Արևելք...։ Գիտելիքների բացակայությունը—ահա... այն բանի պատճառը, որ մենք պտտվում ենք, ինչպես սկյուռը անիվի մեջ և ոչ ոք կոնկրետ ոչինչ չի կարող ասել...։ Մենք գնում ենք խարխափելով»[23]։

Արևելյան հարցի վերաբերյալ նոյեմբերի 27-ին համագումարի ընդունած բանաձևում առկա էին մի քանի կարևոր և ճիշտ դրույթներ, որոնք իրենց տեսական մակարդակով նշանակալի չափով գերազանցում էին համագումարում տեղի ունեցած բանավեճի մակարդակը։ Դրանք առաջին հերթին հետևյալ կետերն էին. կոմունիստների վերաբերմունքը Արևելքի ազգային շարժման նկատմամբ և հակաիմպերիալիստական բոլոր ուժերի միասնության անհրաժեշտությունը։ Բանաձևի 8-րդ պարագրաֆում ասվում էր, որ Արևելքում կոմունիստների հեղափոխական աշխատանքը պետք է ընթանա երկու ուղղությամբ, որոնք «որոշվում են, մի կողմից... դասակարգային-հեղափոխական ծրագրով... որը թելադրում է Արևելքի երկրներում կոմունիստական կուսակցությունների աստիճանական կազմավորման անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից ...Արևելքի դրությամբ, որը թելադրում է Արևելքում ազգային շարժմանը աջակցելու անհրաժեշտությունը մինչև նրա ազգային շարժման հայտնի մոմենտը, որն ուղղված է այնտեղ արևմտաեվրոպական իմպերիալիզմի իշխանության տապալմանը, քանի որ այդ շարժումը չի հակասում միջազգային պրոլետարիատի դասակարգային-հեղափոխական ձգտմանը՝ տապալելու միջազգային իմպերիալիզմը»։ Այդ թեզի զարգացման համար 9-րդ պարագրաֆում, որն ընդունվել էր Թուրքեստանյան պատվիրակության առաջարկով, ասվում էր, թե հարկավոր է «Արևելքի ճնշված ժողովուրդների գործողությունները համաձայնեցնել Արևմուտքի պրոլետարիատի գործողությունների հետ» և որ դրա համար «Երրորդ ինտերնացիոնալին պետք է հայտարարել, որ ազգային-ազատագրական շարժումը Արևելքում և սոցիալիստական հեղափոխությունը ներկայումս հետապնդում են ընդհանուր նպատակ՝ կապիտալիստիմպերիալիստների լծի տապալումը»[24]։ Այդ որոշումներում արտահայտվեց համագումարում Վ. Ի. Լենինի պատմական ելույթի ազդեցությունը։ Վ. Ի. Լենինի ելույթն աչքի էր ընկնում Արևելքի երկրներին բնորոշ սոցիալ-տնտեսական կոնկրետ սլայմանների խոր վերլուծությամբ։ Ոչ թե բանվորները, որոնք անցել են կապիտալի հետ դասակարգային պայքարի դպրոցը, այլ գյուղացիներն են կազմում Արևելքի բնակչության մեծամասնությունը, որը տառապում է միջնադարյան ճնշման տակ։ Հետևաբար, ասում էր Վ. Ի. Լենինը, «հարկավոր է լուծել ոչ թե կապիտալի դեմ, այլ միջնադարյան մնացուկների դեմ մղվող պայքարի խնդիրը»[25]։ Դրա համար էլ հերթի էր դրված ոչ թե սոցիալիստական, այլ ազգային, բուրժուադեմոկրատական հեղափոխությունը, որն ուղղված է միջազգային իմպերիալիստների և տեղական ֆեոդալների դեմ։ «Դուք պետք է բազավորվեք այն բուրժուական նացիոնալիզմի վրա, որ այդ ժողովուրդների մեջ արթնանում է և չի կարող չարթնանալ, և որը պատմական արդարացում ունի։ Դրա հետ միասին դուք պետք է ճանապարհ հարթեք դեպի ամեն մի երկրի աշխատավոր և շահագործվող մասսաները և նրանց համար հասկանալի լեզվով ասեք, որ ազատության միակ հույսը միջազգային հեղափոխության հաղթանակն է, և որ միջազգային պրոլետարիատը հանդիսանում է Արևելքի բոլոր աշխատավոր և շահագործվող հարյուր միլիոնավոր ժո-

---

23 Նույն տեղում, թ. 234—235։

24 Նույն տեղում, ց. 65, գ. 9, թ. 55—56։

25 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 403։

ղովուրդների միակ դաշնակիցը»[26]։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ պետք է աջակցել ազգային-ազատագրական շարժումներին, որոնք չեն կորցրել իրենց հեղափոխական հնարավորությունները, հանդես գալ հակաիմպերիալիստական բուրժուազիայի հետ որոշակի համագործակցությամբ՝ նպաստելով նրա պայքարին, որն ուղղված է օտարերկրյա իմպերիալիզմի և տեղական ֆեոդալիզմի դեմ։ Նա կոչ էր անում սովորել կոմունիստական տեսությունը կիրառելու Արևելքի հետամնաց երկրների սպեցիֆիկ պայմաններում, փնտրել Արևմուտքի պրոլետարիատի և Ասիայի աշխատավոր մասսաների դաշինքի ձևերը՝ իմպերիալիզմի դեմ միասնական պայքարի համար։ «Խնդիրն այն է,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որ արթնացնենք աշխատավոր մասսաների ինքնագործունեության և կազմակերպման հեղափոխական ակտիվությունը, անկախ այն բանից, թե ինչ մակարդակի վրա են կանգնած նրանք, իսկական կոմունիստական ուսմունքը, որն ավելի առաջավոր երկրների կոմունիստների համար է նախանշված, թարգմանենք ամեն մի ժողովրդի լեզվով, իրագործենք այն գործնական խնդիրները, որ անհապաղ հարկավոր է իրագործել, և մյուս երկրների պրոլետարների հետ միաձուլվենք մեկ ընդհանուր պայքարում»[27]։

Շատ կոմունիստների համար դժվար էր միանգամից հրաժարվել սոցիալիստական հեղափոխության, որպես Արևելքի երկրների կոմունիստների գլխավոր խնդրի, գաղափարից։ Դժվար էր նաև միանգամից անցնել հակաիմպերիալիստական լայն, միասնական ճակատի, պրոպագանդիստական, հեղափոխական, կազմակերպական աշխատանքի գաղափարին, այն էլ բազմաթիվ տարիների համար։ Պայքարը ձախության դրսևորումների դեմ ազգային-ազատագրական շարժումներում շարունակվում էր։ Վ. Ի. Լենինի ելույթը բարձրացրեց այն կոմունիստների տեսական միտքը, որոնք աշխատում էին Արևելքի պրոբլեմների վրա։

Ելնելով սովետական երկրի արևելյան ժողովուրդների բոլոր կոմունիստական ուժերը ՌԿ(բ)Կ Կենտկոմի շուրջը սերտորեն համախմբելու անհրաժեշտությունից, համագումարը որոշեց ՌԿ(բ)Կ մուսուլմանական կազմակերպությունների Կենտրոնական բյուրոն վերանվանել ՌԿ(բ)Կ Կենտկոմին կից Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների Կենտրոնական բյուրո, որը պետք է գործեր կուսակցության Կենտկոմի ղեկավարությամբ։ Նրան հանձնարարվեց կարգավորել ազգային լեզուներով հրատարակությունները (թերթեր, ամսագրեր, բրոշյուրներ, թերթիկներ)։ Նշելով նախկին բյուրոյի աշխատանքներում տեղ գտած թերությունները (թույլ կապը տեղական կուսակցական կազմակերպությունների հետ, աշխատանքի ընդհանուր պլանի բացակայություն և այլն), համագումարը նոր բյուրոյին հանձնարարեց հատկապես ուշադրություն դարձնել տեղական կուսակցական կազմակերպությունների ամրապնդմանը, որոնք ստեղծվել էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքով[28]։ Համագումարն ընտրեց կոմունիստական կազմակերպությունների Կենտրոնական բյուրո[29]։

Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսական I և II համագումարների որոշումները, ինչպես և հետագայում Վ. Ի. Լենինի «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատությունը վճռական նշանակություն ունեցան Արևելքի երկրներում (ինչպես և Ռուսաստանի ազգային շրջաններում) երիտասարդ կոմունիստների ձախության բնույթի սխալների հաղթահարման գործում։

---

26 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 404։

27 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 403—404։

28 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 17, ց. 2, պ. մ. 5, թ. 7, պ. մ. 6, թ. 1—2։

29 Նույն տեղում, պ. մ. 12, թ. 84։

ВОПРОСЫ РЕВОЛЮЦИОННОЙ ТАКТИКИ НА ВСЕРОССИЙСКИХ СЪЕЗДАХ КОММУНИСТИЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЙ ВОСТОКА

ГРАЙР ДАРБИНЯН

Резюме

Победа Великой Октябрьской социалистической революции способствовала бурному развитию коммунистического движения и в национальных районах России.

По инициативе В. И. Ленина в октябре 1918 г. при ЦК РКП (б) было создано Центральное бюро мусульманской организации РКП(б), которое руководило работой национальных секций.

Большую роль в деле дальнейшего распространения идей марксизма-ленинизма сыграли всероссийские съезды коммунистических организаций народов Востока, в работе которых приняли активное участие также многие представители большевиков Закавказья. На II съезде с речью выступил В. И. Ленин. Он выдвинул положения, которые, найдя дальнейшее развитие в его других произведениях, стали важнейшими элементами стратегии и тактики Коминтерна в национально-освободительных движениях.